ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵԼԻՔՅԱՆ ԼԻԼԻԹ ԿԱՄՈՅԻ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՄԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ XII-XVII ԴԱՐԵՐՈՒՄ

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

## Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ-2023

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

**Գիտական ղեկավար՝** պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Մարգարյան Հայրապետ Գնորգի**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝** պատմական գիտությունների դոկտոր
**Բոզոյան Ազատ Արտաշի**

պատմական գիտությունների թեկնածու
**Նազարյան Լիանա Մաշայի**

**Առաջատար կազմակերպություն՝** **«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ-հիմնադրամ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թ. դեկտեմբերի 26-ին, ժամը $13^{00}$-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թ. նոյեմբերի 24-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Մուրադյան Հ. Ղ.**

# ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը**: XII-XVII դարերն առանձնահատուկ են Հայաստանի և Վրաստանի՝ բազմադարյան բարեդրացիական պատմության համար: Նկատենք, որ XII-XIII դարերի ընթացքում հայկական երկրամասերի հետ վրաց պետական ոլորտի մեջ է ընդգրկվում նաև Հայոց եկեղեցին: Մասնավորապես, XII դարասկզբին՝ Հյուսիսային Հայաստան[1] հոգևոր կենտրոններ Սանահինն ու Հաղբատը, Հյուսիսային Հայաստանը Քարթլի պետական կազմավորման մեջ ընգրկվելուց հետո, լայնորեն ներգրավվում են նաև Վրաստանում հաստատված հայության հոգևոր, մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի կազմակերպման գործընթացում: Միաժամանակ, վրաց թագավորների խրախուսմամբ, ինչպես նաև՝ պայմանավորված Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական ծանր կացությամբ, նկատվում է հայ արհեստավորների, առևտրականների, ազնվական ընտանիքների հոսք դեպի վրաց արքունի խոշոր քաղաքներ՝ Տփղիս, Գորի, Բազարի և այլն: Արդյունքում, վրացական շրջաններում հաստատված հայության համար առաջացավ հոգևոր առումով առանձնանալու անհրաժեշտություն:

Առանձնահատուկ կարևորություն ունի նաև Վրաստանի տարբեր քաղաքներում XIV-XVI դարերի ընթացքում հաստատված Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ հայ ազնվական ընտանիքների պատմության քննությունը, քանի որ մեծ է նրանց դերակատարումը ինչպես հոգևոր-մշակութային ժառանգության պահպանման, նաև՝ բազմաթիվ խնդիրների առջև կանգնած մերօրյա Վրաստանի հայ համայնքի դերի վերարժևորման տեսանկյունից:

Ըստ այդմ՝ դարերի ընթացքում ձևավորվում և մինչ այժմ էլ սերտորեն զարգանում են հայ-վրացական բարեդրացիական փոխհարաբերությունները, որում կարևոր դեր ունեն նս Վրաստանի հայկական համայնքը և հայկական թեմը, ինչպես պահպանման-զարգացման, այնպես էլ՝ Վրաստանի հայ հոգևոր-մշակութային ժառանգության կրողներ լինելու դիտակետից: Ուստի վերոնշյալը հիմք է ծառայում և՛թեմայի ուսումնասիրության, և՛ հայագիտության ու կովկասագիտության բնագավառում այդ հարցերը բարձրացնելու արդիականության և, ինչու չէ նաև, անհրաժեշտության համար:

**Գիտական նորույթը և գործնական նշանակությունը:** XII-XVII դդ. Վրաստանում հայկական թեմի պատմությունը գրեթե չի արժանացել հետազոտողների ուշադրությանը: Ատենախոսությունում առաջին անգամ ամբողջականորեն ներկայացվել է հիշյալ ժամանակաշրջանում տեղի հայկական թեմի պատմությունը՝ ներհյուսված հայկական համայնքի պատմության հետ, շրջանառության մեջ դրվել դեռևս չհրատարակված հայերեն, ինչպես նաև՝ տակավին հայերեն չթարգմանված վրացերեն վավերագրեր: Մասնավորապես՝

-տարաբնույթ սկզբնաղբյուրների հիման վրա ներկայացվել է Վրաց թագավորության սահմաններում ընգրկված Հյուսիսային Հայաստանի հոգևոր կենտրոն Սանահին-

[1] Հայաստանի հյուսիսարևելյան շրջանները՝ Տաշիրը, Լոռին, Աշոցքը, Տավուշը, ուսումնասիրվող ժամանակաշրջանում ընդգրկվել են Քարթլի երկրամասի մեջ:

Հաղբատ թեմի նշանակությունը և փոխկապակցվածությունը Վրաստանում առանձին հայկական թեմի հիմնադրման գործում:

-Ուսումնասիրվել է վրաց աշխարհիկ իշխանությունների կրոնական քաղաքականությունը, և այդ համատեքստում ներկայացվել Հայոց եկեղեցու կարգավիճակն ու դրանց ձևավորված փոխհարաբերությունների առանձնահատկությունները:

-Վեր է հանվել Սբ. Էջմիածնի, Վրաստանի հայկական թեմի և վրաց աշխարհիկ իշխանության փոխհարաբերություններն ու դրանց առանցքում ծագած խնդիրները:

-Ներկայացվել է XIV-XVI դդ. Վրաստանում գործող հայ հոգևոր մշակութային կենտրոնների ժառանգությունը՝ այդտեղից դուրս գտնվող այլ հայկական մշակութային օջախների՝ Կիլիկիայում, Երուսաղեմում, Վան-Վասպուրականում, Գորիսում, փոխառնչությունների և փոխազդեցությունների համատեքստում:

-Հայկական և վրացական աղբյուրների համադրմամբ փորձ է արվել վեր հանել ու ամբողջացնել Վրաստանում հայկական թեմի հետևորդ նշանավոր ազնվական ընտանիքների՝ Թումանյանների/ Թումանիշվիլիների, Բեհբությանների և Շանշինյանների տոհմի ծագումնաբանությունը, գործունեության ընդհանուր բնութագիրն ու դավանական կողմնորոշումը:

Նշենք, որ ատենախոսության հիմնական այս դրույթները կարելի է ներառել բուհական կրթական ծրագրերում և դասախոսություններում, իսկ մայրաքաղաք Տփղիսի ու մերձակա հայկական գյուղերի հոգևոր-մշակութային ժառանգության վերաբերյալ դիտարկումները՝ որպես հիմնադրույթ՝ Վրաստանում հայկական մշակութային ժառանգության պահպանման գործընթացում:

**Աշխատանքի ժամանակագրական ու տարածական ընդգրկումը:** Ատենախոսության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են հիմնականում XII-XVII դարերը: Երբեմն՝ պատմական իրադարձությունների պատճառահետևանքային կապը ցույց տալու և մանրամասն անդրադառնալու համար, առանձին դեպքերում ստորին և վերին ժամանակագրական շեմը ստիպված ենք եղել խախտել:

Սկզբնաղբյուրներում Վրաստանում հայկական թեմի առաջնորդների մասին առաջին վկայությունները վերաբերում են XII դարի 70-ական թվականներին[2]: Ժամանակագրական վերին շեմի ընտրությունը պայմանավորված էր հետևյալ հանգամանքով. XVII դարում Տփղիսի թեմը միավորվում է Սանահինի թեմին, իսկ Գորիի թեմը՝ Հաղբատի թեմին, և միայն XVIII դարի երկրորդ կեսից ենք հանդիպում որոշ հիշատակություններ Տփղիսի թեմի մասին: Իսկ արդեն Սիմեոն Երևանցու կաթողիկոսության տարիներին՝ 1763-1780 թթ., Վրաստանում հայկական թեմի վարչական բաժանումը և կառավարումն ամբողջովին փոփոխվում է, որը բնութագրական չէ XII-XVII դարերի համար: Միաժամանակ, եթե XVI-XVII դարերի ընթացքում Վրաստանը բաժանված էր Սեֆյան Իրանի և Օսմանյան Թուրքիայի միջև, արդեն XVIII դարի ընթացքում այստեղ ուժեղանում է ռուսական կայսրության ազդեցությունը, և, փաստացի, 1783 թ. Քարթլի-Կախեթի թագավորությունը Գեորգիևսկի համաձայնագրի ստորագրումով ընկնում

---

[2] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 98, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., կազմ.՝ Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1988, էջ 206-207, Յովհաննէս Երզնկացի, Մատենագրութիւն, հտ. Ա, Ճառեր եւ քարոզներ, բնագրերը հրատ. պատրաստեցին Ա. Երզնկացի-Տեր Սրապյանը եւ Է. Բաղդասարյանը, Երևան, 2013, էջ 233:

է Ռուսաստանի անմիջական վերահսկողության ներքո: Այլ էին ռուսական իշխանությունների մոտեցումները եկեղեցի - պետություն ինստիտուտների նկատմամբ, ինչը նս հատկանշական չէր XIV-XVII դարերի Վրաստանին:

Աշխատանքի աշխարհագրական ընդգրկումը սահմանափակվում է հիմնականում Վրաստանի պետական կազմավորումներ՝ երկրամասեր Քարթլիով և Կախեթով, առանձին դեպքերում՝ Հայաստանի հյուսիսարևելյան շրջաններով՝ Տաշիր, Լոռի, Աշոցք, Տավուշ, որոնք ուսումնասիրվող ժամանակաշրջանում ընգրկվել են Քարթլի երկրամասի մեջ: Ընդ որում՝ Քարթլի երկրամասի հայ բնակչությանը կարելի է բաժանել երկու մասի՝ դեպի վրացական տարածքներ հաստատված և Քարթլի կազմավորման մեջ ընդգրկված՝ Հյուսիսային Հայաստանի բնիկ հայ բնակչություն:

**Ատենախոսության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության հիմնական նպատակը XII-XVII դդ. Վրաստանում հայկական թեմի պատմության համակողմանի հետազոտումն է: Ըստ այդմ՝ առաջադրել ենք հետևյալ հիմնախնդիրները.

-ներկայացնել և պարզաբանել այն ելակետային տարածքը, որի ընդարձակմամբ նախադրյալներ էին ստեղծվելու Վրաստանում նոր թեմ ձևավորելու համար:

-Ներկայացնել Վրաստանում հայ բնակչության ստվարացման գործընթացը:

-Վերհանել և ամբողջացնել Վրաստանում հայկական թեմի կազմավորման պատմությունը:

-Վերլուծել ու ներկայացնել Հաղբատի թեմի և Վրաստանում հայկական թեմի առնչություններն ու դրանց հետևանքները:

-Ներկայացնել XII-XIII դդ. վրաց թագավորների կրոնական քաղաքականությունը և համեմատական վերլուծությամբ սահմանել Հայոց եկեղեցուն շնորհված արտոնություններն ու սահմանափակումները:

-Ներկայացնել վրաց թագավորների, մոնղոլ կառավարիչների և Վրաստանում հայկական թեմի փոխհարաբերությունները:

-Պարզաբանել և վերլուծել վրաց իշխանությունների և Սբ. Էջմիածնի միջև առկա փոխհարաբերությունները, վերհանել դրանցում առկա խնդիրները, վերջիններիս ծագման պատճառներն ու հետևանքները:

-Ճշգրտել և լրացնել Վրաստանում հայկական թեմի առաջնորդների Գավազանագիրքը:

-Որոշել Վրաստանում հայկական թեմի տարածական մոտավոր վիճակն ըստ քննվող դարաշրջանների:

-Անակողմնապահ քննությամբ ներկայացնել Վրաստանում հայ հոգևոր մշակութային ժառանգությունը, որոշել դրա տեղն ու դերը հայկական մշակութային կյանքում:

-Ներկայացնել Վրաստանում հայկական թեմի հետևորդ ազնվական ընտանիքների տոհմագրությունը, ծավալած տարաբնույթ գործունեությունը, ինչպես նաև՝ նրանց առնչությունները հայկական թեմի հետ:

**Աշխատանքի մեթոդաբանությունը:** Ատենախոսությունը շարադրված է բազմալեզու, մեծարժեք ու տարաբնույթ սկզբնաղբյուրների տեղեկությունների համադիր քննության և գրականության մեջ առկա իրողությունների համակողմանի վերլուծության մեթոդաբա-

նությամբ։ Պատմահամեմատական մեթոդը կիրառել ենք հայկական, վրացական, առանձին դեպքերում՝ պարսկական և արաբական աղբյուրների հաղորդած տվյալները ճշտելիս, պատմաքննական մեթոդը՝ գիտական շրջանակներում մինչ այդ ընդունված տեսակետների վերանայման ու վերագնահատման, իսկ ծագումնաբանական մեթոդը՝ Թումանյանների, Բեհբուդյանների և Շանշինյանների ընտանիքների տոհմածառը կազմելու ժամանակ։

**Թեմայի ուսումնասիրման աստիճանը:** Ներկայացվող ժամանակաշրջանում՝ XII-XVII դդ., Վրաստանում հայկական թեմին և համայնքին վերաբերող սկզբնաղբյուրները բաժանվում են 7 խմբի՝ կաթողիկոսական դիվաններ, հայկական ձեռագրեր, վրացերեն վավերագրեր, կանոնական նորմերի ժողովածուներ, վիմագիր արձանագրություններ, ձեռագրերի հիշատակարաններ, պատմողական և կրոնադավանական բնույթի երկեր։

Ատենախոսության համար սկզբնաղբյուր են ծառայել Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոնի[3] և Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի (ՄՄ) վավերագրերն[4] ու ձեռագրերը[5]։

Թեմայի ուսումնասիրության վերաբերյալ եզակի և խիստ արժեքավոր տեղեկություններ են ընդգրկված հետազոտության հենք, Սանահինի վանքում գտնվող մատյան-ժողովածույում, որը մասնագիտական գրականության մեջ հայտնի է «Քյոթուկ» կամ «Տոհմամատյան» անվամբ[6]։ Նշանավոր վրացագետ Պարույր Մուրադյանի կողմից համակողմանի հետազոտված այս ժողովածուն արժեքավոր է՝ Վրաստանում հայկական թեմի կարգավիճակի, եկեղեցական վիճակների, թեմական առաջնորդների, ինչպես նաև՝ Սբ. Էջմիածնի հետ փոխհարաբերություններին վերաբերող խնդիրների ուսումնասիրության համար։ Աշխատանքում ներառել ենք Վրաստանի պատմության մի շարք մատենագրական աղբյուրներ՝ «Քարթլիս Ցխովրեբանե[7], Պլատոն Իոսելիանիի[8], Վախուշտի Բագրատիոնիի[9], Իոանե Բագրատիոնիի[10], Փարսադան Գորգիջանիձեի[11] աշխատությունները, էրիսթավների

---

[3] Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոն, ֆոնդ SD, վավ. 4949r, 532-01v, 532-01v-02r, 530, 9221, 2007 ֆոնդ AD, վավ. 1521, 102 ֆոնդ HD, վավ. 11032, 3056։

[4] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1, վավ. 28, 29, 48, 50, թղթ. 228, վավ. 17, թղթ. 242, վավ. 68, թղթ. 244, վավ. 344, թղթ. 252, վավ. 2 (վրացերեն), թղթ. 258, վավ. 6 (վրացերեն)։

[5] ՄՄ, ձեռ. hմր 5181, թ. 208, hմր 5476 թ. 126 r, hմր 7951, hմր 6230, hմր 4047, hմր 9223, hմր 5476, hմր 3031, hմր 8150, hմր 7641, hմր 8150։

[6] Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահինի Քէօթուկը), աշխատասիրությամբ՝ Պ. Մուրադյանի (այսուհետ՝ «Սանահինի Քէօթուկը»), Սբ. Էջմիածին, 2007։

[7] «Քարթլիս Ցխովրեբա» կամ «Վրաց պատմության» հին հայերեն թարգմանությունը, խմբ.՝ Ի. Աբուլաձեի, Թբիլիսի, 1953, "ქართლის ცხოვრება", რ.მეტრეველის რედაქციით, საქართველოს მეცნიერებათა ეროვნული აკადემია, თბილისი, 2008.

[8] იოსელიანი პ., ცხოვრება გიორგი მეცამეტისა, ა. გაწერელიას რედაქციით, თბილისი, 1978.

[9] ბატონიშვილი ვახუშტი, ქართლის ცხოვრება, აღწერა სამეფოსა საქართველოსა, ტომი IV, თბილისი, 2012, ქართლის ცხოვრება, ბატონიშვილი ვახუშტი, საქართველოს სამეფოს აღწერა, ნაწილი მეორე, ტომი V, თბილისი, 2012, Вахушти Багратиони, История царства грузинской, пер. Н. Накашидзе, Тбилиси, 1976.

[10] იოანე ბაგრატიონი, შემოკლებით აღწერა საქართველოსა შინა მცხოვრებთა თავადთა და აზნაურთა გვარებისა, თბილისი, 1997.

[11] გორგიჯანიძე ფ., „საქართველოს ისტორია ",საისტორიო მოამბე, წიგნი II, თბილისი, ს. კაკაბაძის გამოცემა, 1925, 198-320 გვ.

հուշարձանը[12], Վրաստանի պատմության փաստաթղթերի ժողովածուն[13], XVII դարի առաջին կեսին Քարթլիի և Կախեթի թագավորների վերաբերյալ փաստաթղթերի ժողովածուն[14]: Օգտագործել ենք նաև Թ. Ժորդանիայի[15], Ս. Կակաբաձեի[16], Ն. Բեր-ձենիշվիլիի[17] խմբագրմամբ հրատարակված ժողովածուների նյութերը:

Վավերագիր աղբյուրների շարքում կարելի է առանձնացնել և հատկանշել «Վրաց իրավունքի հուշարձաններ» շարքը[18]: Այստեղ կարևոր և բացառիկ տեղեկություններ են ամբարված ինչպես Վրաստանի հայաբնակ բնակավայրերի, այնպես էլ՝ հայ ազնվական ընտանիքների գործունեության, նրանց ունեցվածքի վերաբերյալ:

Հետազոտվող խնդիրների ամբողջական քննության համար օգտագործել ենք հայ մատենագիրների՝ Ուխտանեսի[19], Յովհաննես Երզնկացու[20], Մատթեոս Ուռհայեցու[21], Կիրակոս Գանձակեցու[22], Վարդան Արևելցու[23], Թովմա Մեծոփեցու[24], Առաքել Դավրիժեցու[25], Մխիթար

[12] „ძეგლი ერისთავთა“, კრებული (ქსნის ერისთავთა საგვარეულო მატიანე), ტექსტი გამოსცა, გამოკვლევა, ლექსიკონი და საძიებელი დაურთო შოთა მესხიამ, თბილისი,1954.

[13]ქართული ისტორიული საბუთების კორპუსი : XIV-XV საუკუნეები, შეადგინეს და გამოსაცემად მოამზადეს: თინათინ ენუქიძემ, ნინო თარხნიშვილმა, ბაბილინა ლომინაძემ, ტომის რედაქტორი: მზია სურგულაძე, თბილისი, 2013, ტომი II, 286 გვ.

[14] დოკუმენტური წყაროები XVII საუკუნის I ნახევრის ქართლისა და კახეთის მეფეების შესახებ, ტ. I, თბილისი, 2019.

[15] ქრონიკები და სხვა მასალა საქართველოს ისტორიისა და მწერლობისა, შეკრებილი, ქრონოლოგიურად დაწყობილი და ახსნილი თ. ჟორდანიას მიერ - წიგნი მეორე - 1213 წლიდამ 1700 წლამდე, ტომი II, ტფილისი, 1897.

[16] Какабадзе С., Хроника ксанских эриставов начала XV в., «Письменные памятники Востока», «Историко-филологические исследования», Москва, 1970; նույնի՝ Грузинские документы IX-XV вв., Москва, 1982.

[17] დოკუმენტები საქართველოს სოციალური ისტორიიდან, ტომი II - ბატონყმური ურთიერთობა (XV-XIX სს) - ნ. ბერძენიშვილის რედაქტორობით, თბილისი, 1953, 358 გვ.

[18] ქართული სამართლის ძეგლები, საერო საკანონმდებლო ძეგლები (X-XIX სს.) ტექსტები გამოსცა, შენიშვნები და საძიებლები დაურთო პროფ. ი დოლიძემ, ტომი II, თბილისი, 1965, ქართული სამართლის ძეგლები, სასამართლო განჩინებანი (XVI-XVIII სს.) ტექსტები გამოსცა, შენიშვნები და საძიებლები დაურთო პროფ. ი დოლიძემ, ტომი IV, თბილისი, 1972, ქართული სამართლის ძეგლები, ტომი III, საეკლესიო საკანონმდებლო ძეგლები (XI-XIX სს.), თბილისი, 1970.

[19] Ուխտանէս, Հայոց պատմութիւն, թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Վ. Առաքելեանի, Երեւան, 2006:

[20] Յովհաննէս Երզնկացի, նշվ. աշխ.:

[21] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի, Երևան, 1973:

[22] Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ.:

[23] Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, աշխարհաբար թարգմանությունը, ներածությունը և աստղանիշներով ծանոթագրությունները՝ Գ. Բ. Թումանյանի, Երևան, 2001:

[24] Թովմա Մեծոփեցու յիշատակարանը, հրատ.՝ Կ. Կոստանեանց, Թիֆլիզ, 1892, Թովմա Մեծոփեցի, Պատմագրութիւն, աշխատասիրութեամբ՝ Լ. Խաչիկյանի, Երեւան, 1999:

[25] Առաքել Դավրիժեցի, Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունը՝ Վ. Առաքելյանի, Երևան, 1988, նույնի՝ Գիրք պատմութեանց, աշխատասիրութեամբ՝ Լ. Ա. Խանլարեանի, Երեւան, 1990:

Այրիվանեցու[26], Ստեփանոս Տարոնեցու[27], Զաքարիա Ագուլեցու[28], Սիմեոն Երևանցու[29], Աբրահամ Կրետացու[30], Սարգիս Ջալալյանցի[31] երկասիրությունները, իսկ համեմատական քննության նպատակով՝ նաև իրանական և արաբական գրավոր աղբյուրներ՝ Բարհեբրեուս Աբդուլ-Ֆարաջի [32], Ռաշիդ ադ-դինի[33], Հոդուդ ալ-ալեմիի[34], Հասան Ռումլու[35], Ֆազիլ Բեկ Խուզանի[36] և Ալ- Ֆարիկի[37] երկերը:

Սկզբնաղբյուրների շարքում հարկ է առանձնացնել XIII դարի վրաց անանուն հեղինակի՝ Թամար թագուհու առաջին պատմիչի՝ «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը» աշխատությունը[38]: Այն կարևոր տեղեկություններ է հաղորդում վրացական իշխանությունների և Վրաց եկեղեցու՝ առ Հայոց եկեղեցի ունեցած դիրքորոշման, ինչպես նաև՝ Հայոց եկեղեցու կարգավիճակի վերաբերյալ:

Ատենախոսությունում ընդգրկված աղբյուրների շարքում ուրույն տեղ են զբաղեցնում հայերեն և վրացերեն վիմագիր արձանագրությունները: Օրինակ՝ Կ. Ղաֆադարյանի՝ Հաղբատի և Սանահինի վանքերին անդրադարձող երկերում մանրամասն ներկայացված են դրանց պատմությունն ու վիմագրությունը[39], որոնք արժեքավոր տեղեկություններ են պարունակում Վրաստանում հայկական թեմի և Հաղբատ-Սանահին վանքերի

---

[26] Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860:

[27] Ստեփանոս Տարոնեցի, Տիեզերական պատմութիւն (բնագիրը Գ. Մանուկեանի), «Մատենագիրք Հայոց», ԺԵ հատոր, Ժ դար, գիրք Բ, Անթիլիաս, 2011, էջ 619-830:

[28] Զաքարիա Ագուլեցու Օրագրությունը, պատ. խմբ.՝ Ս. Տեր-Ավետիսյան, Երևան, 1938:

[29] Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբռ, առաջաբան և ծանոթագրությունները՝ Վ. Գ. Համբարձումյանի, պատմաաշխարհագրական բնույթի ծանոթագրությունները և քարտեզները՝ Գ. Բադալյանի, Երևան, 2003:

[30] Աբրահամ Կրետացի, Պատմություն. քննական բնագիր, ռուսերեն թարգմանություն, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ն. Կ. Կորղանյանի, Երևան, 1973:

[31] Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հտ. Բ, աշխատասիրութեամբ՝ Սարգսի Ջալալեանցի, Տփխիս, 1858:

[32] Меликсет-Бек Л., О междоусобице в 1197 году по поводу Кривой пасхи, «Источниковедческие заметки», Ереван, 2010.

[33] „ქართულ-სპარსული ისტორიის საბუთები“, ტექსტი დაადგინა, თარგმნა და შენიშვნები დაურთო ვ. ფუთურიძემ, თბილისი,1955.

[34] Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, հաւաքեց եւ թարգմ.՝ Բ. Խալաթեանց, Վիեննա, 1919:

[35] ჰასან რუმლუს ცნობები საქართველოს შესახებ,სპარსული ტექსტიქართული თარგმანითა და შესავლით გამოსცა ვლადიმერ ფუთურიძემ, თბილის, 1966.

[36] Fazli Beg Khuzani Isfahani. A Chronicle of the Reign of Shah ‘Abbas, edited by K. Ghereghlu, Gibb Memorial Trust, Cambridge, 2015, vol. II.

[37] Տեր-Ղևոնդյան Ա., Ֆարիկիի «Նփրկերտի պատմությունը» (ԺԲ դար) Հյուսիսային Հայաստանի դեպքերի մասին, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հտ. 6, Արաբական երկրներ, Երևան, 1974:

[38] Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ա-Գ մեկ կազմում, հտ. Գ, Երևան, 2013:

[39] Հաղբատ. ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, աշխատասիրությամբ՝ Կ. Ղաֆադարյանի (այսուհետ՝ Հաղբատ), Երևան, 1963, Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, աշխատասիրությամբ՝ Կ. Ղաֆադարյանի (այսուհետ՝ Սանահինի վանքը), Երևան, 1957:

փոխառնչությունների, նաև՝ տփղիսաբնակ ուխտավորների վերաբերյալ: Խնդրո առարկա թեմայի հետազոտման համար աղբյուրագիտական կարևոր արժեք ունեն «Դիվան հայ վիմագրության» շարքի վեցերորդ և իններորդ պրակները[40], Պ.Մուրադյանի «Հայաստանի վրացերեն արձանագրություններն»[41] ու Գ. Գագոշիձեի և Ն. Չանթլաձեի «Մոնոֆիզիտ հուշարձանները Վրաստանում»[42] հետազոտությունները:

Աղբյուրագիտական արժանահավատությամբ առանձնահատուկ են ձեռագիր հիշատակարանները[43]: Դրանցում եզակի տեղեկություններ են ամբարված Վրաստանի հոգևոր-մշակութային ժառանգության, թեմական առաջնորդների, ինչպես նաև՝ այդտեղ գործող հայ ազնվական ընտանիքների վերաբերյալ:

Վրաստանում հայկական թեմի մշակութային ժառանգության և հայկական համայնքի տարաբնույթ հարցերը լուսաբանելու նպատակով ատենախոսությունում նաև ընդգրկել ենք XIII-XVII դդ. օտարալեզու ուղեգրությունները[44]:

Քննարկվող այս ժամանակաշրջանում Հայոց և Վրաց եկեղեցիների փոխհարաբերությունների, դրանցում առկա խնդիրների լուծման գործում վրաց աշխարհիկ իշխանության դերի արծարծման լավագույն ներկայացումն է Մխիթար Գոշի «Թուղթ առ Վրացիսն՝

---

[40] Դիվան հայ վիմագրության, պր. VI, Իջևանի շրջան, կազմ.՝ Ս. Ա. Ավագյանը, Հռ. Մ. Ջանփոլադյանը, Երևան, 1977, Դիվան հայ վիմագրության, պր. IX, Լոռու մարզ, կազմ.՝ Ս. Գ. Բարխուդարյան,Կ. Գ. Ղաֆադարյան, Ս. Տ. Սաղումյան, Երևան, 2012:

[41] Մուրադյան Պ., Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977:

[42] გაგოშიძე გ., ნ. ჩანთლაძე, მონოფიზიტური ძეგლები საქართველოში, თბილისი, 2009.

[43] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., նաև՝ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.), հտ. Բ, կազմ.՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1978, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԴ դար, մաս Ա (1301-1325 թթ.), կազմ.՝ Խաչիկյան Լ., Մաթևոսյան Կ., Ղազարոսյան Ա., Երևան, 2018, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Ա (1401-1450 թթ.), կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Բ (1451-1480 թթ.), կազմ.՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմ.՝Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմ.՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (1601-1620 թթ.), հտ. Ա, կազմ.՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1984, ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (1641-1660 թթ.), հտ. Գ կազմ.՝ Վ. Հակոբյան, Երևան, 1984, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, կազմեց՝ Անուշաւան վրդ. Դանիէլեան, Անթիլիաս-Լիբանան, 1984, «Մատենագիրք հայոց», հտ. ԺԱ, Ժ դար, գիրք Ա, կազմեց եւ խմբագրեց՝ Պ. Յովհաննիսեան, Անթիլիաս-Լիբանան, 2010:

[44] Шарден Жан, Путешествие Шардена по Закавказью в 1672-1673 гг., пер. Е. В. Бахутовой и Д. П. Носовича, Тифлис, 1902, Полиевктов М., Европейские путешественники XIII-XVIII вв. по Кавказу, Тифлис, 1935, Материалы по истории грузино-русских взаимоотношений (1615-1640). (Посольства: Веревкина, Харитона, Феодосия, Никифора, Геченева и Волконского), сост. М. Полиевктов, Тбилиси, 1937, Kern A., “Libellus de notitia orbis” Johannes' III (de Galonifontibus) O. P. Erzbischof von Sulthanyeh, Roma, 1938, Марко Поло, Путешествие, перевод со французского И. Минаева, Ленинград, 1940, Путешествия русских послов XVI-XVII вв. (статейные списки), отв. ред. Д. Лихачев, Москва-Ленинград, 1954, Руи Гонсалес де Клавихо, Дневник путешествия в Самарканд ко двору Тимура (1403-1406), Москва, 1990.

յաղագս ուղղափառութեան հաւատոյ» կրոնադավանաբանական աշխատությունը[45]: Նման բնույթի սկզբնաղբյուրների շարքից նաև օգտվել ենք Ներսես Շնորհալու «Ընդհանրական թուղթք» աշխատությունից[46], որում արժեքավոր ու եզակի փաստեր են հաղորդվում 1179 թ. Հռոմկլայի ժողովում Վրաստանի հայկական թեմի մասնակցության և դիրքորոշման վերաբերյալ:

Սբ. Էջմիածնի կաթողիկոսի ընտրության գործընթացներում Վրաստանի հայկական թեմի մասնակցության, ինչպես նաև թեմական առաջնորդների վերաբերյալ մեծարժեք է Մ. Օրմանյանի «Ազգապատում» աշխատասիրությունը[47]: Հայկական համայնքի, Վրաստանում հայկական թեմի վերաբերյալ եզակի աղբյուրներ են պահպանվել Գյուտ Աղանյանցի «Հայերը Վրաստանում» հետազոտությունում[48]: Դիտարկվող թեմայի քննական տեսանկյունից կարելի է նշել Ն. Մելիք-Թանգյանի «Հայոց եկեղեցական իրաւունքը» աշխատությունը[49]: Այն Հայոց եկեղեցու իրավունքի և վարչական կառուցվածքի վերաբերյալ, թերևս, ամենաամբողջական հետազոտությունն է:

Ատենախոսությունում օգտագործվել են հայ անվանի վրացագետներ՝ Լ. Մելիքսեթ-Բեկի[50], Պ. Մուրադյանի[51], Հ. Մարգարյանի[52], Պ. Չոբանյանի[53] գիտականորեն և պատմագրական

[45] Մխիթար Վարդապետ Գոշ, Թուղթ՝ Ուղղված վրացիներին հավատի մասին, թարգմ.՝ Տեր Վ. Մկրտչյան աբեղա, Ռ. Արզումանյան սրկ., Լ. Բաղիրյան սրկ., Երևան, 2014:

[46] Ընդհանրական թուղթք Ս. Ներսեսի Շնորհալւոյ, Երուսաղէմ, 1871:

[47] Օրմանեան Մ., Ազգապատում. Հայ Ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկզբիէն մինչև մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հտ. Բ, Անթիլաս-Լիբանան, 2001:

[48] Գիւտ Աղանեանց, Վրաստանի հայերը, «Տարազ» (Թիֆլիս), 1919, թիւ 1-12, էջ 44:

[49] Ներսէս Վարդապետ Մելիք-Թանգեան, Հայոց եկեղեցական իրաւունքը, գիրք Ա., առա-ջաբանի և ծանոթագրությունների հեղ.՝ Ա. Բոզոյան, Սբ. Էջմիածին, 2011:

[50] Ցուցակ հայերեն ձեռագրաց Վրաստանի կենտրոնական պատմական արխիվի, կազմ.՝ Լ. Մե-լիքսեթ-բեկ, «Բանբեր Մատենադարանի», 1958, թ. 4, էջ 386-388, Մելիքսեթ-Բեկ Լ., Հին Թբիլիսիի և հայ-վրացական կուլտուրական կապերի պատմությունից, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, թիվ 3, էջ 150-160, նույնի՝ Հայերը Վրաստանում, «Кавказ и Византияр», вып. 1, Ереван, 1979, с. 167-178, նույնի՝ Թումանյանների ծննդաբանությունը և Եփրեմ կաթողիկոսի 1813 թվի կոնդակը, «Պատմա-բանասիրական պրպտումներ», աշխատասիրությամբ՝ Պ. Մուրադյանի, Սբ. Էջմիածին, 2010, էջ 121-133, նույնի՝ «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց» և նրանց ինքնութիւնը, վրացե-րենից թարգմ.՝ Հր. Բայրամյան, Սբ. Էջմիածին, 2016:

[51] Մուրադյան Պ., Հայաստանի վրացերեն արձանագրությունները, նույնի՝ Աթենի Սիոնի նորահայտ հա-յերեն արձանագրությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1979, թիվ 3, էջ 214-223, նույնի՝ Грузинские приписки и записи в армянской рукописи 1317 г. из Гладзора, «Кавказ и Византия», вып. 1, Ереван, 1979, с. 82-98; նույնի՝ Դաւանական հանդուրժողականութեան եւ ազգամիջեան համերաշխութեան գա-ղափարը ԺԲ-ԺԳ դարերի Հայաստանում, Կովկասեան մշակութային աշխարհը և Հայաստանը, պր. Ա., Երևան, 2008, նույնի՝ «Վրաց պատմության» հայերեն թարգմանության գնահատության հարցի շուրջ, «Էջ-միածին» հանդես, 2008, թիվ Զ-Է, էջ 93-101, նույնի՝ Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, Սբ. Էջմիածին, 2009:

[52] Մարգարյան Հ., Միջֆեոդալական պայքարը Գեորգի III-ի ժամանակ և Քուրդ ամիրապետը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1975, թիվ 11, էջ 9-39, նույնի՝ Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երևան, 1980, նույնի՝ К вопросу о личности и деятельности некоего Шадина, «Кавказ и Византия», вып. 3, Ереван, 1982, с. 64-72, նույնի՝ Феодальный иммунитет и процесс закрепощения крестьянства в Армении и Грузии в XI-XIII веках, «Кавказ и Византия», вып. 4, Ереван, 1984, с. 19-20, նույնի՝ Զաքարյանների ծագումը,

մեծարժեք հետազոտությունները, ինչպես նաև՝ ակադեմիկոսներ Հ. Մանանդյանի[54] և Ս. Երեմյանի[55] աշխատությունները: Առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում նաև Հ. Ոսկյանի[56], Նորայր Արք. Պողարյանի[57], Բ. Ուլուբաբյանի[58], Ա. Շահնազարյանի[59], Ա. Բոզոյանի[60], Բ. Առաքելյանի[61], Ա. Յակոբեանի[62], Ա. Եղիազարյանի[63], Մ. Մալխասյանի[64], Կ. Մաթևոսյանի[65] երկասիրությունները:

Թեմայի համար օգտագործել ենք նաև վրացի հետազոտողների ուսումնասիրություններ, որոնցից կարելի է առանձնացնել Գ. Մախուրաձեի «Վրացի և հայ ժողովուրդների

---

«Պատմաբանասիրական հանդես», 1994, թիվ 1-2, էջ 156-175, նույնի՝ Զաքարյանների ծագման ավանդությունը միջնադարյան հայ պատմագրության մեջ, «Պատմաբանասիրական հանդես», 1992, թիվ 2-3, էջ 139-152, նույնի՝ Բագրատունի թագավորների «Տիեզերակալ» տիտղոսը, «Պատմության հարցեր», 2005, հտ. 6, էջ 98-111, նույնի՝ Կովկասեան մշակութային աշխարհը և մոնղոլները, «Բազմավէպ», Վենետիկ, 2010, ՃԿԸ տարի, թիւ 3-4, էջ 627-638:

[53] Չոբանյան Պ., Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ. դարի երկրորդ կեսին, Սբ. Էջմիածին, 2006:

[54] Манандян А., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, նույնի՝ Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հտ Գ, Երևան, 1977:

[55] Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի» (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963, նույնի՝ Юрий Боголюбский в армянских и грузинских источниках, научные труды гос. Университета, вып. XXIII, Ереван, 1946, с. 389-421:

[56] Ոսկեան Հ., Գուգարքի վանքերը, Վիեննա, 1960:

[57] Պողարեան Ն. Արք., Ծիսագիտութիւն, Նիւ Եորք, 1990:

[58] Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դդ., Երևան, 1975:

[59] Շահնազարյան Ա., Զաքարյանների բուն տոհմանունը, «Հայոց պատմության հարցեր» (գիտական հոդվածների ժողովածու - 2), Երևան, 2001, էջ 18-25, նույնի՝ Զաքարյանների ազատամարտի առաջին փուլը, «Հայոց պատմության հարցեր» (գիտական հոդվածների ժողովածու – 6), թիվ 9, Երևան, 2005, էջ 132-147, նույնի՝ Տաշիր-Ձորագետի Կյուրիկյան թագավորության առաջացումն ու հզորացումը, «Պատմաբանասիրական հանդես», 2009, թիվ 2-3, էջ 225-233:

[60] Բոզոյան Ա., Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165-1178), Երևան, 1995, նույնի՝ Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգն ու Զաքարյանների հովանու ներքո ԺԳ դարի սկզբին տեղի ունեցած ժողովները, «Տոնագիր» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2021, էջ 55-84:

[61] Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա, Երևան, 2001:

[62] Յակոբեան Ա., Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում անտիկից մինչեւ ԺԳ դար (պատմա-աղբիւրագիտական քննութիւն), Երեւան, 2020:

[63] Եղիազարյան Ա., Կախեթի իշխանությունը IX դարում և X դարի սկզբին, «Արևելագիտության ժողովածու», հտ. XXVII, Երևան, 2009, էջ 14-27, նույնի՝ Հայ Բագրատունիների տերությունը (885-908) (պատմաաշխարհագրական ուսումնասիրություններ), Երևան, 2011, նույնի՝ Գահաժառանգության խնդիրը Բագրատունյաց Հայաստանում և գահակցության վարկածը, «Էջմիածին» հանդես, 2015, թիվ ԺԲ, էջ 55-68:

[64] Մալխասյան Մ., Ժողովրդական գործընթացները Հայաստանում 16-րդ դարում 17-րդ դարի առաջին կեսին, Երևան, 2020:

[65] Մաթևոսյան Կ., Անի. Եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Սբ. Էջմիածին, 1997, Surb Gevorg Cathedral.որմնանկարներ, фрески, ფრესკები, the frescoes: Ալբոմ., նախաբանի հեղ.՝ Կ. Մաթևոսյան, Ա. Ավետիսյան, Երևան, 2015:

հարաբերությունները XIII–XVIII դդ.»[66], Զ. Աբաշիձեի «Диархия Давида Строителя»[67], Գ. Գվիրտիշվիլիի «Աղբյուրներ Վրաստանի պատմությունից (XV-XVII դդ.)»[68], Ա. Բաքրաձեի «XVII–XVIII դարերի վրացի քարտուղար-դպիրների (Մարտիրոսաշվիլի, Բեգթարբեգիշվիլի) տոհմաբանության հարցի շուրջ»[69], Շ. Մեսխիայի «Города и городской строй феодальной Грузии»[70], Ն. Բերձենիշվիլիի «Очерк из истории развития феодальных отношений в Грузии»[71], Դ. Բաքրաձեի և Ն. Բերեզնովի համահեղինակային «Тифлис в историческом и этнографическом отношениях»[72], Ի. Ջավախիշվիլիի[73], Լ. Ճիաշվիլիի[74] աշխատանքները:

**Ուսումնասիրության փորձաքննությունը:** Ատենախոսության հիմնական արդյունքները և դրույթները հրապարակվել են վեց հոդվածներում: Ատենախոսության հիմնադրույթների հիմնական մասը փորձաքննություն է անցել միջազգային վեց գիտաժողովներում:

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ պատմության ֆակուլտետի Հայոց պատմության ամբիոնի կողմից:

**Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից, եզրակացությունից ու հավելվածից:

**Ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացված է ատենախոսության գիտական նորույթը, հիմնավորված են հետազոտության ժամանակագրական ու տարածական սահմանները, տրված է օգտագործված աղբյուրների ու գրականության տեսությունը:

**Առաջին գլուխը՝ «XII-XIII ԴԱՐԵՐՈՒՄ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՄԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ»,** բաղկացած է երեք ենթագլխից:

**Առաջին ենթագլխում՝ «Վրաստանում հայկական թեմի նախապատմությունը»,** քննության ենք ենթարկել Սմբատ II արքայի հրովարտակը Հյուսիսային Հայաստանի հոգևոր կենտրոն Սանահինի թեմի եկեղեցական վիճակի վերաբերյալ: XII դարում՝ Հյուսիսային

---

[66] მაისურაძე გ., ქართველი და სომეხი ხალხების ურთიერთობა XIII-XVIII საუკუნეებში, თბილისი, 1982.

[67] Абашидзе З., Диархия Давида Строителя, Пер., снабдил предисл., словарями и указателем Н. Т. Накашидзе, Тбилиси, 2010.

[68] გვრიტიშვილი დ., ნარკვევები საქართველოს ისტორიიდან: (XV-XVII სს.), თბილისი, ტომი II, 1965.

[69] ბაქრაძე ა., თუმანიშვილთა საგვარეულოს გენეალოგიის დადგენის ცდა XVII-XVIII სს., „მაცნე", 1983-4, № 4, გვ. 88-89, նույնի՝ XVII-XVIII საუკუნიეების ყართველ მდივან-მწიგნობართა გენეალოგიის საკითხისათვის, (მართიროსაშვილები, ბეგთარბეგიშვილები), მოამდე, XV, თბილისი, 1962, გვ. 253-261.

[70] Месхия Ш. А., Города и городской строй феодальный Грузии XVII-XVIII вв., Тбилиси, 1959, նույնի՝ მესხია შ., საქართველოს ქალაქების სოციალური ურთიერთობის ისტორიიდან, II, თბილისი, 1951.

[71] Бердзенишвили Н., Очерк из истории развития феодальных отношений в Грузии (XIII-XVI вв.), Тбилиси, 1938; ბერძენიშვილი ნ.,საქართველოს ისტორიის საკითხები, წიგნი VI, თბილისი, 1973.

[72] Бакрадзе Д., Берзенов Н., Тифлис в историческом и этнографическом отношениях, СПб., 1870.

[73] ჯავახიშვილი ივ., ქართველი ერის ისტორია, წიგნი მეოთხე. XV-XVI საუკუნეები,თბილისი, 1948, նույնի՝ საქართველოს ისტორია: XI-XV საუკუნეები, თბილისი, 1949.

[74] ჭილაშვილი ლ., ძველი გავაზი, ისტორიულ-არქეოლოგიური გამოკლევა, თბილისი,1975.

Հայաստանը Վրաց թագավորության մեջ ընգրկվելուց հետո, որոշ ժամանակահատված Վրաստանում հայկական թեմը նեռարել է նաև Հյուսիսային Հայաստանում տեղակայված Սանահինի թեմի եկեղեցական վիճակները: Ըստ այդմ՝ փորձ է արվել ճշգրտել Սանահինի թեմի եկեղեցական վիճակի սահմանները և ցույց տալ Սմբատ II-ի կողմից դրանց ընդարձակման շարժառիթները:

**Երկրորդ ենթագլխում՝ «Հայ բնակչության ստվարացումը Վրաստանում և հայկական թեմի կազմավորումը»,** ցույց ենք տվել Վրաստանում հայ բնակչության ստվարացման շրջափուլերը: Ներկայացվել են՝ Վրաստանում հայկական թեմի ձևավորման գործընթացը, թեմական առաջնորդների գործունեությունը, փոխհարաբերությունները Հայոց կաթողիկոսի և վրաց թագավորների միջև: Փորձ է արվել պարզել քաղքեդոնական հուշարձաններում առկա Վրաստանում հայկական թեմի առաջնորդների հիշատակման հնարավոր դրդապատճառները:

**Երրորդ ենթագլխում՝ «XII-XIII դարերում Վրաստանում Հայոց եկեղեցու կարգավիճակը»,** ցույց ենք տվել Վրաց թագավորների վարած կրոնական քաղաքականության առանձնահատկությունները և որդեգրած վեկտորները, անդրադարձել ենք Հայոց և Վրաց եկեղեցիների փոխհարաբերությունների հիմնախնդիրներին: Փորձել ենք պարզել Վրաստանում Հայոց եկեղեցու տեղն ու կարգավիճակը:

**Երկրորդ գլուխը՝ «ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՄԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ XIV-XVI ԴԱՐԵՐՈՒՄ»,** բաղկացած է երեք ենթագլխից:

**Առաջին ենթագլխում՝ «Վրաստանում (Քարթլի, Կախեթ) հայ բնակչության նոր խմբերի հաստատվելու քաղաքական ու տնտեսական նախադրյալները XIV-XVI դարերում»,** ներկայացված են թուրքմենական ակ-կոյունլու և կարա-կոյունլու ցեղերի գերիշխանության ժամանակաշրջանում, ինչպես նաև՝ Սեֆյանների տիրապետության ընթացքում դեպի Վրաստան (Քարթլի, Կախեթ) հայ բնակչության նոր ալիքի ներհոսքի, հաստատման նախադրյալներն ու պատճառները՝ ըստ հայերեն ձեռագիր հիշատակարանների վկայությունների: XIV-XVI դարերին վերաբերող հայերեն հիշատակարանների հաղորդած տեղեկություններն աչքի են ընկնում պատմական իրողությունների հետ համակողմանիությամբ և ճշգրտությամբ: Դրանք մանրամասն նկարագրում են Հայաստանում և Վրաստանում տիրող սոցիալ-տնտեսական, քաղաքական իրադրությունը, միաժամանակ՝ ուշագրավ տեղեկություններ պարունակում հայերի նկատմամբ վրաց թագավորների վարած քաղաքականության վերաբերյալ:

**Երկրորդ ենթագլխում՝ «Հայկական հոգևոր կենտրոնները և դրանց մշակութային գործունեությունը Վրաստանում XIV-XVI դարերում»,** ներկայացրել ենք Վրաստանում Հայոց եկեղեցիների հոգևոր ժառանգությունն ըստ վրացերեն ու հայերեն վավերագրերի, հայերեն ձեռագիր հիշատակարանների և վիմագիր արձանագրությունների: Փորձ է արվել ներկայացնել Վրաստանում հայկական եկեղեցիններին կից գործող գրչօջախների փոխառնչություններն այդտեղից դուրս գտնվող հայկական մշակութային այլ կենտրոնների հետ՝ շեշտադրում անելով ձեռագրերի պատվիրատվության, մանրանկարչական դպրոցների հետ ունեցած փոխառնչությունների վրա: Անաչառ քննության ենք ենթարկել Կրծանիս գյուղի Սբ. Աստվածածին ու Տփղիս քաղաքի Բեթղեհեմ եկեղեցիները և, միաժամանակ, հիմնավորել դրանց հայկական լինելը:

**Երրորդ ենթագլխում՝ «Հավելումներ Վրաստանում հայկական թեմի առաջնորդների ցանկում և թեմի կարգավիճակը XIV-XVI դարերում»,** փորձ է արվել ճշգրտել ու լրացնել Վրաստանում հայկական թեմի առաջնորդների Գավազանագիրքը, որը ընդհատվում է 1284 թվականին և վերսկսվում միայն 1443 թ.: Ներկայացվել է 1441 թ.՝ Հայոց կաթողիկոսական աթոռը Հայաստան տեղափոխվելուց հետո, Վրաստանում հայկական թեմի և Հայոց կաթողիկոսության փոխհարաբերությունները, վերջինիս գործելակերպը թեմի նկատմամբ:**Երրորդ գլուխը՝** «**ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՄԸ XVI-XVII ԴԱՐԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՅ ԱԶՆՎԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ »,** բաղկացած է երկու ենթագլխից:

**Առաջին ենթագլխում՝ «Հայերի տեղաբաշխվածությունը (Քարթլի) և հոգևոր կյանքի կազմակերպումը XVI-XVII դարերում»,** հայկական և օտար աղբյուրների հիման վրա ներկայացրել ենք հայ բնակչության տեղաբաշխվածությունը Քարթլի քաղաքներում՝ Տփղիսում, Գորիում, Ախալգորիում: Փորձ է արվել ցույց տալ Գորիի հայկական թեմի կազմավորման նախադրյալներն ու վերջինիս առնչությունները Հաղբատի թեմի հետ, միաժամանակ՝ Հայոց կաթողիկոսության վերաբերմունքը և գործելակերպը Գորիի թեմի նկատմամբ:

**Երկրորդ ենթագլխում՝ «Հայ ազնվական ընտանիքները վրացական վերնախավում XVI- XVII դարերում (տոհմագրությունը, գործունեության ընդհանուր բնութագիրը, դավանական կողմնորոշումը)»,** ներկայացված են Վրաստանում հայկական թեմի հետ սերտ առնչություններ ունեցող հայ ազնվական ընտանիքների՝ Թումանյաններ/Թումանիշվիլիների, Շանշինյանների, Բեհբուդյանների, տոհմագրությունը, գործունեության ընդհանուր բնութագրական գծերն ու դավանական կողմնորոշումը՝ վրացական և հայկական վավերագրերի համադրմամբ:

**Եզրակացություններում** ի մի են բերվել ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրակացությունները:

-XII-XV դդ. ընթացքում հայ բնակչությունը գլխավորապես հաստատվել ու ստվարացել է Վրաստանի կենտրոնական հատվածներում՝ Տփղիս և նրա շրջակայքում, Գորի և դրա մերձակայքում: Արդեն XVI դարում Քարթլիի քաղաքների ավերումից և տնտեսական նշանակության կորստից հետո, նկատվում է հայերի խտացում Կախեթ երկրամասում:

-Դեպի Վրաստան հայության ներհոսքի հիմնական խթանների շարքում պետք է ընդգծել նաև վրաց թագավորների վարած բարենպաստ քաղաքականությունը. քաղաքային կյանքի կարգավորումով՝ այստեղ, ինչպես նաև գյուղերում հայերին բնակեցնելով, առևտրի համար նպաստավոր պայմաններ ստեղծելով, մնացյալ հայ իշխանական տան ներկայացուցիչների իշխանի տիտղոսը պահպանելով: Որպես այս ամենի արդյունք՝ հայերը ձեռք էին բերում կեցության հնարավորություն, իսկ վրաց կենտրոնական իշխանությունը փորձում էր լուծել իր առջև ծառացած դեմոգրաֆիկ և տնտեսական խնդիրները:

-XII-XIII դդ. կրոնների ու դավանանքների հավասարությունն ամենևին բնորոշ չի եղել Վրաստանին: Թագավորական իշխանությունը ձգտել է հեգեմոն դիրք ապահովել վրացական եկեղեցու համար, իսկ մահմեդականությանը շնորհել է առանձնահատուկ արտոնություններ՝ ելնելով իր քաղաքական ու տնտեսական շահերից: Հայոց եկեղեցին, օժված լինելով մի շարք իրավունքներով, մշտապես գործում էր վրաց իշխանությունների

վերահսկողության և եկեղեցու ճնշման ներքո: Կրոնական հանդուրժողականությունը չի կարելի բնութագրական համարել հատկապես վրաց հոգևորականության և հասարակության լայն շերտերի համար:

-XIII-XIV դդ. Վրաստանի մոնղոլ կառավարիչները հանդուրժող վերաբերմունք էին ցուցաբերում հայկական թեմի նկատմամբ: Դա, թերևս, պայմանավորված էր մոնղոլ խաների և հայ աշխարհիկ իշխանությունների փոխհամագործակցային հարաբերություններով և քրիստոնյա հայ բնակչությանը իրենց քաղաքական հենարանը դարձնելու ձգտմամբ:

-XII դարի 70-ական թվականին հանդիպում են առաջին հիշատակությունները թեմական առաջնորդի մասին. հետևապես, պետք է դիտարկել՝ նշյալ ժամանակաշրջանում Վրաստանում հայկական թեմն արդեն կազմավորված էր: Քննվող շրջանում թեմի վարչական կենտրոնը Տփղիսն էր, իսկ մինչև 1253 թ.՝ ներկայիս Սբ. Գևորգ կամ Բերդի մեծ եկեղեցու հիմնադրումը, որպես առաջնորդարան ծառայել է Բերդի փոքր կամ Քառասնից եկեղեցին:

-Մինչև XII դարի 80-ական թվականը Վրաստանի հայկական թեմը ընդգրկում էր Տփղիսի և նրա մերձակա շրջանների, ինչպես նաև՝ Հյուսիսային Հայաստանի՝ Լոռի-Տաշիր, հայկական վիճակները: Սկսած XII դարի 80-ական թվականից՝ Հաղբատի վանքը վերականգնում է իր առաջնորդական դերը, և Վրաստանում հայկական թեմի առաջնորդն միաժամանակ անվանվում է Հաղպատի թեմի եպիսկոպոս: Պետք է նշել, որ XIV դարի ընթացքում և մինչև XV դարի երկրորդ կեսը Վրաստանում հայկական թեմը և Հաղպատը ունեին մեկ թեմական առաջնորդ:

-Վրաց թագավորության սահմաններում ընդգրկված հայկական բնակավայրերի՝ Ղազախի, Բորչալուի, Փամբակի ձորի, Աշոցքի, եկեղեցական վիճակները XV-XVI դդ. գտնվում էին Սանահինի թեմի վիճակի մեջ:

-Դատելով աղբյուրներից՝ Վրաստանում հայկական թեմի առաջնորդ Հովհաննես Դոփյան եպիսկոպոսից հետո թեմական առաջնորդ է նշանակվել Հովհաննես Սանահնեցին (1298 թվականից): Ճշգրտվել է, որ մոտ 1430-ական թվականներին թեմը գործել է մեծահարուստ Փաշայի որդի Հովհաննես արքեպիսկոպոսի առաջնորդությամբ[75]: Մարկոս եպիսկոպոսից (մոտ 1440–1455 թթ.) հետո թեմն առաջնորդվել է Հաղբատի թեմական առաջնորդ Ղուկաս արքեպիսկոպոսի կողմից:

-1441 թ.՝ կաթողիկոսական աթոռը կենտրոնական Հայաստան տեղափոխվելուց հետո, Սբ. Էջմիածինը ձգտում էր ուժեղացնել իր վերահսկողությունը Վրաստանի ողջ հայկական վիճակի վրա: Դատելով աղբյուրներից՝ վրաց թագավորության սահմաններում գտվող հայկական վանքերը՝ Սանահինը և Հաղբատը, գործում էին Սբ. Էջմիածնի գերագահության ներքո, սակայն Հաղբատը մշտապես վայելում էր վրաց թագավորների հովանավորությունը, որի նպատակով Սբ. Էջմիածինը ձգտում էր Վրաստանի հայ բնակչության վերահսկողությունը դնել Սանահինի թեմի իրավասության տակ: Այս նկրտումները հանդիպում են ինչպես վրաց իշխանությունների, այնպես էլ՝ վրաց եկեղեցու ընդդիմությանը: XV դարում Վրաստանում հայկական թեմի սահմաններում ընդգրկված

---

[75] Տե՛ս սույն աշխատանքի «Հավելված 2» բաժնում, աղյուսակ, էջ 145:

վիճակը պարբերաբար բաժանվում էր Սանահինի և Հաղբատի եպիսկոպոսությունների միջև՝ գերազահության սկզբունքով:

- XVI դարում Վրաստանում Տփղիսի թեմը լուծարվում է և միավորվում Քարթլի երկ-րամասի կազմում գտնվող Հյուսիսային Հայաստանի հոգևոր կենտրոն Սանահինի թեմին: Այս հանգամանքը կարելի է բացատրել Տփղիսում ու նրա շրջակայքում հաստատված հայության վիճակը ավելի Էջմիածնակենտրոն դարձնելու և նրանց շրջանում վրաց քաղքեդոնականության հնարավոր ազդեցությունը կանխելու նպատակով:

-Դատելով ուսումնասիրված աղբյուրներից՝ XVII դարում Գորիում գործել է առանձին հայկական թեմ՝ Սբ. Էջմիածնի իրավասության ներքո: 1682 թ. Գորին իր վիճակով ընդգրկվում է Հաղբատի թեմի մեջ: Վրաց թագավորության սահմաններում ընգրկված հայկական բնակավայրերի՝ Ղազախի, Բորչալուի, Փամբակի ձորի, Աշոցքի եկեղեցական վիճակը քննարկվող ժամանակաշրջանում ընդգրկված էին Սանահինի թեմի վիճակի մեջ:

-Վրաստանում հայկական հոգևոր մշակույթը, կենտրոնացած լինելով հայկական թեմի շուրջ, զարգանում էր Հայաստանի, ինչպես նաև մյուս երկրների հայկական համայնքի հոգևոր-մշակութային և կրթական կենտրոնների հետ համագործակցության և փոխառնչությունների արդյունքում: Ելնելով առկա աղբյուրներից՝ դեռևս XIV դարասկզբին թեմական առաջնորդարան Սբ. Գևորգ եկեղեցուն կից գործում էր դպրոց, որտեղ դասավանդում էին կրոնագիտություն, երաժշտություն, գրչարվեստ և մանրանկարչություն: Մեզ հասած հայկական նկարազարդ ձեռագրերը փաստում են, որ XIV-XVI դարերում Տփղիսում հայկական մանրանկարչական դպրոցն իր դիրքերով չէր զիջում հայաստանյան այլ հռչակավոր կենտրոններին:

- Հայկական և վրացական աղբյուրների ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ Տփղիսում՝ Բեթղեհեմ եկեղեցին և Կրծանիս գյուղում՝ Սբ. Աստվածածինը՝ ի սկզբանե եղել են հայկական կառույցներ:

-Թումանիշվիլի ազգանունը պետք է դիտարկել որպես Թումանենցի կամ Թումա-նեանի վրացերեն թարգմանություն, այլ ոչ թե՝ առանձին տոհմի կամ նույն տոհմի, սակայն տարբեր դավանանքների հարող ներկայացուցիչների ազգանուն: Ի դեպ, XVII դարում Վրաստանում գործում էին Թումանյանների/ Թումանիշվիլիների գերդաստանի ոչ թե երեք խոշոր ճյուղ, այլ՝ չորս: Քննվող ժամանակաշրջանում նրանք գերազանցապես եղել են Հայոց եկեղեցու հետևորդներ և զբաղեցրել են արքունական դպիրի պաշտոն:

-Նորահայտ աղբյուրների ուսումնասիրության շնորհիվ ճշգրտվել և վերականգնվել է Շանշինյան/Բեգթարբեկյան ընտանիքի՝ XVII դարի տոհմածառը: Քննվող շրջանում Շանշյան տոհմի ներկայացուցիչները, առանց վերապահության, եղել են հայ առաքելական եկեղեցու հետևորդներ: Նրանք արքունի դպիրների պաշտոններ են զբաղեցրել:

-Հետազոտվող ժամանակաշրջանում՝ XII-XVII դդ., Բեհբուդյանների տոհմի ներկա-յացուցիչները զբաղեցրել են զինվորական և պետական բարձր պաշտոններ՝ ընդհուպ քաղաքապետ: Ուսումնասիրության արդյունքում ճշգրտվել է, որ Տփղիսի Սբ. Ստեփանոս կուսանոցը կառուցվել է ոչ թե Խոջա Բեհբուդի որդու կողմից, այլ նրա թոռան՝ Աշխարիբեկի և թոռնորդու՝ Մելիք Աղայի ջանքերով: Հարկ է նշել, որ առանց

որևէ վերապահության Բեհբուդյան տոհմի ներկայացուցիչները եղել են Հայ Առաքելականն եկեղեցու հետևորդներ:

**Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրատարակություններում.**

1.Մելիքյան Լ., Վիրահայոց թեմի նախապատմությունից, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2017, էջ 144-148:
2.Մելիքյան Լ., Հայոց եկեղեցին և հայերը Վրաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում (X-XIII ԴԴ.), «Հայագիտության հարցեր», N 3(24), 2021, էջ 37-49:
3.Մելիքյան Լ., Մի դրվագ 14-15–րդ դդ. Վրաստանում Հայոց թեմի պատմությունից, Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու, 2022, հտ. Է, էջ 211-222:
4.Մելիքյան Լ., Քարթլի-Կախեթում հայ բնակչության նոր խմբերի հաստատվելու քաղաքական ու տնտեսական նախադրյալները, «Պատմություն և քաղաքականություն», 2022, N 4 (21), էջ 76-89:
5.Մելիքյան Լ., Հայկական հոգևոր կենտրոնները և դրանց մշակութային գործունեությունը Վրաստանում XIV-XV դարերում, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, N 2 (18), 2022, էջ 27-38:
6.Մելիքյան Լ., Վրաստանում Բեհբուդյանների տոհմի պատմությունից, «Հայագիտական հանդես», N 1 (60), 2023, էջ 152-166:

**МЕЛИКЯН ЛИЛИТ КАМОЕВНА**

# □СТАТУС АРМЯНСКОЙ ЦЕРКВИ И АРМЯНСКАЯ ЕПАРХИЯ В ГРУЗИИ В XII-XIII ВЕКАХ□

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 «История Армении»

Защита состоится 26-ого декабря 2023 г., в $13^{00}$ на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4).

## РЕЗЮМЕ

Данное исследование посвящено статусу Армянской апостольской церкви и Армянской епархии в Грузии. Одной из главной целью диссертации является представление и анализ истории Армянской епархии Грузии XII-XVII веков, переплетенной с историей армянской общины. Одновременно вводятся в научный оборот ранее неопубликованные армянские и грузинские документы.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованных источников и литературы. Во введении обоснованы важность и актуальность исследования, а также научная новизна работы. Указаны цели и задачи, поставленные перед автором, проанализированы использованные первоисточники и научная литература.

В первой главе, озаглавленной «СТАТУС АРМЯНСКОЙ ЦЕРКВИ И ФОРМИРОВАНИЕ АРМЯНСКОЙ ЕПАРХИИ В ГРУЗИИ В XII-XIII ВЕКАХ» представлена грамота царя Смбата II о церковном положении духовного центра Северной Армении: Санаинской епархии. В XII веке, после того как Северная Армения была включена в состав Грузинского царства, в состав Армянской епархии в Грузии вошла Санаинская епархия, находившаяся в Северной Армении. Автором были исследованы первопричины побудившие Смбата II расширить границы Санаинской епархии. Рассмотрены этапы расселения армян в Грузии.

В работе представлен процесс формирования Армянской епархии в Грузии, в том числе деятельность ее епископов, их отношения с Католикосом Армении и грузинскими царями. Рассмотрены возможные причины упоминания епископов Армянской епархии в халкидонских памятниках.

В данной диссертации отражены особенности религиозной политики, проводимой грузинскими царями, так же затронуты проблемы взаимоотношений между Армянской и Грузинской церквями.

Во второй главе, озаглавленной «АРМЯНСКАЯ ЕПАРХИЯ В ГРУЗИИ В XIV-XVI ВЕКАХ» представлены первопричины нового этапа расселения армян в Грузии: в Картли, в период господства Ак-Коюнлу, Кара-Коюнлу, а также при правлении династии Сефевидов.

Представлено взаимодействие центров рукописей при армянских церквях Грузии с армянскими культурными центрами за её пределами. Беспристрастно рассмотрены вопросы принадлежности церквей Св. Богородицы в селе Крцанис и Вифлеема в городе Тпгис, доказано их принадлежность к Армянской церкви. В данной работе исправлена и дополнена □Книга Жезлов□ епископов Армянской епархии в Грузии, записи в которой прервались в 1284 году и были возобновлены лишь в 1443 году.

В третьей главе, озаглавленной «АРМЯНСКАЯ ЕПАРХИЯ В ГРУЗИИ В XVI-XVII ВЕКАХ И АРМЯНСКИЕ ДВОРЯНСКИЕ СЕМЬИ» представлено расселение армянского населения в городах Картли: Тпхис, Гори, Ахалгори. Рассмотрены предпосылки образования Горийской епархии Армянской церкви и ее отношения с Ахбатской епархией и Армянским Католикосатом. Представлена генеалогия, общая деятельность и конфессиональная ориентация армянских дворянских родов, тесно связанных с армянской епархией в Грузии: Туманцы/Туманишвили, Шаншинцы, Бебудянцы.

В заключении подведены итоги проведенной работы и изложены основные выводы исследования.

**MELIKYAN LILIT KAMO**

STATUS OF THE ARMENIAN CHURCH AND ARMENIAN DIOCESE IN GEORGIA IN THE XII-XIII CENTURIES

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of «History of Armenia» 07.00.01.

The defense of the dissertation will be held on December 26, 2023, at 13⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave., 24/4).

SUMMARY

This study is devoted to the status of Armenian church and Armenian episcopate in Georgia during XII-XVII centuries, aiming to present the history of the Armenian diocese of Georgia in XII-XVII centuries., combined with the history of the Armenian community, putting into circulation unpublished Armenian documents, as well as Georgian documents not yet translated into Armenian.

The PhD thesis consists of introduction, three chapters, conclusion and list of references. The introduction substantiates the importance and relevance of the study, as well as its scientific novelty. Next, the goals and objectives set for the author are indicated, the primary sources and scientific literature used are analyzed.

In the first chapter, “STATUS OF THE ARMENIAN CHURCH AND ARMENIAN DIOCESE FORMATION IN GEORGIA IN THE XII-XIII CENTURIES,” the charter by King Smbat II on the ecclesiastical status of Northern Armenia’s spiritual center, the Sanahin diocese is presented. In the XII century, after Northern Armenia was included in the Georgian kingdom over time the Sanahin diocese, located in Northern Armenia, entered the Armenian diocese boundaries in Georgia. An attempt is made to determine the Sanahin diocese boundaries and to clarify the motives of Smbat II for their expansion. The stages of Armenians’ settlement in Georgia are considered. The part contains a review of process of formation Armenian diocese in Georgia, the activities of its bishops, and their relations with the Catholicos of Armenia and the Georgian kings. It examines the possible reasons for mentioning Armenian diocese bishops in Georgia in

Chalcedonian monuments. also the peculiarities of the religious policy pursued by the Georgian, and the problems of relations between the Armenian and Georgian churchesю

The second chapter, “THE ARMENIAN DIOCESE IN GEORGIA IN THE XIV-XVI CENTURIES,” reveals the prerequisites and reasons for new settlement course of Armenians in Georgia: in Kartli, during the rule of Aq Qoyunlu and Qara Qoyunlu Turkmens, as well as the Safavids’. An attempt is proposed to present booklore centers of interaction between Armenian churches in Georgia and Armenian cultural centers outside Georgia. It considers the ownership of churches of the Holy Mother of God in the village of Krtsanis and Bethlehem in the city of Tpghis impartially, and reveals their belonging to the Armenian Church was proved. The part contains an attempt to correct and supplement the “Book of Wands” by the bishops of the Armenian diocese in Georgia which was interrupted in 1284 and resumed only in 1443.

The third chapter, “THE ARMENIAN DIOCESE IN GEORGIA IN THE XVI-XVII CENTURIES AND ARMENIAN NOBLE FAMILIES,” presents the Armenian population settlement in the cities of Kartli - Tigis, Gori, Akhalgori. The prerequisites for the formation of the Gori diocese of the Armenian Church and its relationships with the Akhbat diocese, as well as with the Armenian Catholicosate are considered. The genealogy, various activities and confessional orientation of the Armenian noble families of Tumanets/Tumanishvili, Shanshinets, Bebudyants in Georgia are researched and presented from the viewpoint of their ties with the Armenian diocese in Georgia.

In conclusion, the results of the research carried out are summed up and the main conclusions of study are outlined.